


Uchitelnaya

5451

Учитель



U - 1908

9011

ԱՐԵԱԿ ՄԱՍԹԷՈՍԵԱՆ ԱԼՕԵԱՆՑ

891.99  
Q-32

# ԿԱՇԻԱ

ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ

Ի գ. Գեօդաքլու

Առ քեզ զաս,  
ինչ էս անում, խաս ու ստուգ.

Վ Բ Ե Խ Ա Կ

ՏՊԱՐԱՆ «ԼՈՅ» ԱՐՁԱԿ ՅԱԿՈՎԵԱՆՑԻ ԵՒ ՈՐԴԻՔ.

1908 թ.

Գրառուսութեան

450

ԱՐԵԱԿ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԼԵՎԱՅ

Ճրմակ Շահմատօսյան գեղանց  
Քայրա. Խոճօքելու առաջ  
առաջ

ԿԱՇՊԱ

ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ԻՄ ԿԵԱՆՔԻՑ

Ի գ. Գեղագիւղու

Առ բեղ դաս,  
Բնշ ես անում, խաս ու ասուղու

ԳԻՒՂԱՆ Ե 15 կ.



2003

ՀՐԱՄԱՆ Ա. Յ.

ՀՐԱՄԱՆ ՅԱԿՈՂԱԲԵՅԻ ԵՒ ԱՐԴԻՔ.

1908 թ.

4

ԱՊՐԻԼ ԱՄՄՈՒԽՆ

Արշալոյսը բացւելուն պէս ևս Մատթէոսեան Արշակ  
Ալօեանս շտագեցի գնալ մեր այգին որը, գտնուում է մեր  
Գեօգաքլու դիւզում, որպէսզի դիւզական մարդկանցից  
Ճնշւած սիրտս զովացնէի: Եյզին հասնելուն պէս՝ նկատե-  
ցի մի ուռենի, որը տիրալի դէմք էր արտայայտում ինձ:  
«Երա սիրտն էլ իմ սրտիս նման» է ասացի մաքումս և  
սկսեցի իմ երգը.

Ախ, տիուր ուռենի,  
Տրտում ուռենի,  
Արշակը քեզ մատաղ լինի.  
Թոյլ տուր քո զովը նստի,  
Կամ ուզում ես արի  
Մենք երկուսովս,  
Թե առնենք, թոչենք,  
Եյս ու ու տիուր աշխարհից  
Մենք էլ պրծնենք:

Նստեցի կանաչ մարգագետնի վրա, սոյն ուռենու-  
տակ, բայց չէր լսում ոչ մի կողմից ձայն. ոհ, տիրալի  
ուռենի, ինչ լաւ կը լինէր, որ խօսել զիտենայիր և ման-  
րտման պատմէիր ինձ քո ցաւերը և ես էլ ընկերանայիր  
քեզ ճետ ցաւերս պատմելու: Դեռ չէի վերջացրել վերո-  
յիշեալ խօսքերս, յանկարծ ուռենու վրայէն լսեց մի ձայն,  
որ պատրաստում էր երգել: Գլուխս վերի բարձրացրի և  
տեսա սոխակ է, կարծես թէ հասկանում է իմ և ուռենու  
սրտի տիրութիւնը և ուզում է իր երգով ուրախացնել ինձ  
և տիրեալ ընկերոջս. ես, Ալօեանս, ունկնդիր եղայ նորեկ  
երգիչ սոխակին, որ երգել սկսեց կարծես թէ այսպէս:



359/5-66 0-

ԱՅ 886-ամ

ՍՈՒԱԿԻ ԵՐԳԸ

Լսեցէք, եղբայրք, իմ երգերը.  
 Շուտով կուրախանան ձեր սրտերը,  
 Կը ցւրւեն ձեր սրտերի տիրութիւնները,  
 Ամեն առաւօտ կուրախացնեմ երգերովս ձեր  
 սրտերը:

Երբ հետեւ մայիսեան օրերը,  
 Խնդրեմ թող հեռանայ ձեր ընկերը.  
 Փամանակ է կերակրելու բնում մնացած ձագերը:  
 Հեռացաւ, թափ տալով  
 Իւր շողշողուն թերը:

ՄԱՐԴՈՒ ՎԻՃԱԿԻ

Ազնիւ կեանքս փչացնում եմ,  
 Գիշեր ու ցերեկ տանջւում եմ,  
 Ոլով անպատմելի քրանում եմ,  
 Կուգայ ժամը, երբ կը մեռնեմ.  
 Բոլոր աշխատածս ի՞նչ պիտի անեմ:

Արեի տակին ամեն օր չարչարւեմ,  
 Յանկարծ մի օր գերեզման մտնեմ,  
 Ամեն աշխատած աշխարհում թողնեմ.  
 Ո՞հ, մահւանս վրա ցաւում եմ, ցաւում:

ԻՆՔՆՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Շատ մարդ եմ կողոպտել,  
 Շատ անկանոն գործեր գործել,  
 Բազմաթիւ տներ քանդել,  
 Դեռ ևս չեմ մտածել,  
 Թէ ի՞նչ եմ արել:

Ահա լուռ ու մունջ նստեմ, մտածեմ,  
 Վերջ ի վերջոյ ի՞նչ պիտի անեմ,  
 Որ այսքան անխիղճ բանել  
 Ես մենակ գործեմ:

Ո՞հ, անխիղճ են արած գործերս իմ  
 Շուտով թոյլատրեմ,  
 Ի՞նչ պիտի լինեմ:


Այս, կը գառնամ մարդ թանկագին.  
 Ահա այսպէս վերջ գործին:

ԱՆՃԱՐ ՄԱՐԴ

Տխուր նստած եմ,  
 Ապշած այս ու այն կողմ կը նայեմ,  
 Ո՞հ, ում աղաչեմ,  
 Որ ցաւերիս մի դեղ անէ:

Շատ աղաչել էի Արարչին,  
 Որ ճար անէ իմ ցաւերին,  
 Բայց ճար չը կայ նրանից,  
 Շատ ինդրել եմ, լսող չէ:

Ծուտով ընկնեմ  
Սար ու քար ման գամ,  
Ցաւերիս մի գեղ գանեմ  
Դարդիս դարման անեմ:



### ՎԱՏ ԲՆԿԵՐԻՑ

Ինձ տանջում են անխիղճները,  
Անհանկացող անկիրթները,  
Որոնք չը գիտեն իրանց արած գործերը,  
Ո՞հ, ճար չկայ, ի՞նչ անեմ:

Այսպէս տանջումելով, գերեզման պիտ մանեմ:  
Քնքոյշ ու սառն հողի տակ պառկեմ.  
Ի՞նչ է պատճառը, աէր Աստւած իմ,  
Որ այսքան ցաւեր ես, Արշակս քաշեմ:



### ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԵՐ

Ա՛խ, արի մենք երկուսովք  
Ուզիդ կանգնենք,  
Չեռներս փակենք,  
Վիզներս ծոենք,  
Մէկ մէկու երես նայենք,  
Արտասու քներ աչքերնիս թափենք,  
Այնուհետեւ որ մեռնում ենք,  
Թող երկուսովս  
Միատեղ մեռնենք:



### ԱՆՃԱՐ ՄԱՐԴ

Ոտս դրիմ ծովի ափը,  
Ներս քաշեց ինձ ալիքը,  
Բերանս լցւաւ ջրով լիքը,  
Ո՞հ, ճար չկայ, ի՞նչ անեմ:

Կանչում եմ ինձ մի օգնող,  
Զրից ազատող ու փրկող,  
Զը կայ մի այնպիսի ողորժացող.  
Ո՞հ, ճար չը կայ, ի՞նչ անեմ:

Բնկել եմ փոս խորի մէջ,  
Բնկել եմ ոհ ծովի մէջ,  
Կանչում եմ ինձ մի օգնող,  
Զրից ազատող ու փրկող:

### ԱՆԲԱԽՏ ՄԱՐԴ

Ո՞հ, ուր է այն բախտը,  
Որ նստեմ զրախտը,  
Կարեմ երջանիկ կեանքը,  
Ստանամ Աստւածանից փառքը:


Լուռ ու մունջ նստել եմ,  
Բախտիս վրա կը մտածեմ,  
Չեռներս երկինք կը տարածեմ,  
Ստածանից բախտ կը խնդրեմ:

Բախտն ինձ կորցրել է  
Ինձանից բաժանելով, ուրիշին գտել է.

Ուր էլ լինի, նրան կը գտնեմ,  
Միայն բռունցքով ինձ հետ կը միացնեմ,  
Այդպիսի բախտը ոչնչանայ,  
Որ ուրիշի հետ կը միանայ:

Ով իմ ցաւերս քաշէր,  
Քար լինէր՝ կը հալւէր՝  
Սար լինէր կը պատուէր.  
Ո՞հ, ուր տեղ փնտում երջանիկ կեանք:

Ատամներս կը ճառելով՝ մաշւեցաւ,  
Սիրսս ցաւերով փրթւեցաւ,  
Զիգարս հարիւր տեղ ծակւեցաւ,  
Ո՞հ, որտեղից գտնեմ երջանիկ կեանք:



### ԾիրԱՆԻ

Ես ծիրանի եմ համով, հոտով,  
Կը նուիրեմ պտուղս ուրախ սրտով.  
Ով կերել է իմ պտուղս՝  
Նա կը ճանաչէ ինձ շուտով:

Շատ համով ես, ծիրանի,  
Պտուղներդ ամենին կը շահի,  
Պտուղներդ ընդունողը,  
Եզնիւ ու խաղաղ մարդ կը լինի:

Շատ համով ես ծիրանի,  
Ճղներդ երկար կը տարածւի,  
Զով ստւերիդ տակ  
Շատ մարդիկ կը նստի:

### ՄԿՆԻԿ

Բնից դուրս եկաւ մկնիկը  
Ակսեց ծըւծըւալ, ուրախանալ դրսեր,  
Բայց երբ տեսաւ չար կատուն,  
Վրա հասաւ իսկոյն,  
Իսկ մկնիկը հասաւ իր բոյն.  
Հանգիստ եղիր, ով չար կատու,  
Քեզից ուժեղ՝ վագր կայ:

### ՈՒՆԱՅՆ ԱՇԽԱՐՀ

Աշխարհն է մի աստղիկ,  
Իրա տաքացնողն է արեիկ,  
Վրայի մարդկանցից շատերն են մարգարիտ,  
Բայց մի քանիսն էլ անկիրթ,  
Ո՞հ, աշխարհ, ունայն ես, ունայն:

Կան վրադ շատ աղբիւրներ,  
Կան ծաղիկներ ու ծառեր,  
Թափելով վրադ անձրեի կաթիլներ,  
Գոյանում նրանցից առւակներ.  
Ո՞հ, աշխարհ, ունայն ես, ունայն:

Ամենայն բան  
Ինչից ստանում՝  
Կրկն իրանց յանձնում,  
Ո՞հ, աշխարհ, ունայն ես, ունայն:  
Զուրը վըայիցդ ոչ աւելանում է, ոչ պակասում,  
Ստանում ես ամպերից՝ կրկն իրանց յանձնում,

Վրայիդ բնակւողներին ցտւեր պարզեռում,  
Ո՞հ, աշխարհ, ունայն ես, ունայն:


Չես հանգստանայ ոչ մի վայրկեան,  
Աշխատում ես ու կարգադրում ամեն բան.  
Ժամանակին չէ մնում  
Ոչ ծառ, ոչ մարդ, ոչ մի բան,  
Ո՞հ, աշխարհ, ունայն ես, ունայն:

### ՀԱՐՈՒՍ ՄԱՐԴՈՒՆ

Ո՞վ հարուստ, գու բախտ ունես,  
Տունդ դիզած փող ունես.  
Անտեղի աղքատներից ստացել ես,  
Զրկելով, յափշտակելով առել ես:

Աստւած չէ ընդունում այդպիսի բան,  
Շուտով կանէ հարստութիւնդ ամենայն,  
Աղքատ կը թողնէ առաջւայ նման,  
Կը մնաս աշխարում անօդնական:

Իմացիր, Աստւած է կարգադրում ամեն բան  
Վախեցիր նրանից ու պահիր նրա պատիրան,  
Թէ պահես, կը լինես նրան դիւրեկան,  
Զի պակասի  
Ոչ հաց, ոչ հարստութիւն, ոչ մի բան:



### ԳԻՒՂԱԿԱՆ ԼՕԲԻ

Պաս է,  
Թաժայ հարս է.  
Ուտողն ուռելով կը մարսէ.  
Զիմացողն փորը լիքը կը դարսէ  
Եւ կասէ.  
«Որ մնայ, ափսոս է»,  
Զի հասկանում, որ իրանը վնաս է,  
Ով շատ ուտէ  
Նա մարդ չէ:

### ԱՆՄԻՏ ՈՐՍՈՐԴ

Մարդու մէկր պարզ ջրում,  
Ուռկանով ձուկ էր որսում  
Այս ու այն փոսն ընկնում,  
Դարձեալ ոչինչ չէր գտնում:  
Նոյն բօպէում,  
Վրայ հասաւ իսկոյն մի մարդ.  
Ո՞վ ազնիւ ու քաջ տղամարդ,  
Սկսեց իր խրատը.  
«Պարզ ջրում ձուկը քեզ կը տեսնէ,  
Փոսիկներումը իր անձը կը թագցնէ,  
Եթէ ուզում ես գործդ յաջողէ,  
Պղտոր ջրում միայն որսա»:

ԱՏԱԽՈՍ ԱՐՄԻԿԸ

Երբ ես սենեակում նստած  
Դասագիրքս ձևաքս առած  
Կարդում էի թէ նրանում լինչ է գրած,  
Ներս մտաւ Արմիկը, շունչը սպառած,  
Դողդողալով սկսեց պատմել իւր տեսած.  
Ես ականջներս արթուն պահած  
Լոււմ էի նրա պատմած:  
(Արմիկ) Հէնց հիմա դաշտից գալիս 12 գայլ եմ տեսած:  
— Միթէ 12 գայլ կը լինի միտաեղ հաւաքուած.  
Հա, հա, եղբայր, սխալւայ, 10 էր իմ տեսած:  
— Տասն էլ սուտ է:  
Հա, հա, ինն էր:  
— Հէնց սուտեր ես ասում, որ չեղած:  
Եյր, այր, հինգն էր:  
— Մեշօկներով ստեր:  
Հա, հա,  
Մինը տեսայ,  
Այն էլ լաւ չիմացայ  
Գայլ էր,  
Թէ շուն էր:



ՆԻՎԶ ՈՒԹԵՆԻ

Եկաւ քամին պաստիկ ուժով  
Խիտ անտառին նա խփեց,  
Վերջ ի վերջոյ նւազ ուռենուն նա վլորեց,  
Բայց միւսները ուժեղ կանգնած  
Չէին վախենում ահեղ քամուց:  
Փչեց, փչեց,  
Գլուխը կախեց ու գնաց:  
Հըմ, լինչ պէտք է անէր  
Կուրծք դէմ տւողին:  
Նա սովոր էր  
Փտած ուռին:

— ՀՀ ՀՀ —

ԱՂՔԱԾ ԽՌԽՄԲ

Հանգիպեցայ աղքատութեան խմբերի,  
Փայփայելով նրանց հարցըի,  
Թէ իրանց գնալն ուր պիտի լինի.  
Ստացայ պատասխան արժանի:

Մենք գնում ենք մօտ աղքատի,  
Մենք հարուստի չենք ճանաշի,  
Թէկուզ հարուստը մեղ կանչի,  
Իզուր բերանը կը մաշի:

Կայ աղքատ  
Շուտ կը հարստանայ,  
Կայ հարուստ  
Շուտ կը աղքատանայ:


• • • • •

ԶԱՐԱՒԹԻՒՆ

Հանդիպեցայ մի խումբ չարութեան,  
նրանց հետ ընկայ խօսակցութեան.  
— Ուր էք գնում, ես հարցրի:  
— Մենք գնում ենք մօտ չար մարդի,  
Մենք խեղճի  
Զենք ճանաշի  
Թէկուզ խեղճը մեզ կանչի,  
Ի զուր բերանը կը ցաւի:

ԲԱԽՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ

Հանդիպեցայ մի խումբ բախտի.  
— Ուր էք գնում ես հարցրի,  
Ստացայ պատասխան յարդի.  
— Մենք գնում ենք մօտ այն մարդի,  
Որ բաղմաթիւ բախտ ունի,  
Մենք անբախտ մարդի,  
Երբէք չենք ճանաշի,  
Թէ անբախտ մեզ կանչի,  
Ի զուր տառմերը կը մաշւի:



ԱԻՐԱԽՈՒԹԻՒՆ

Հանդիպեցայ մի խումբ ուրախութեան,  
Ուր էք գնում, ես հարցրի:  
Ստացայ նրանցից պատասխան,  
Որոնց պատասխանն էր շատ գուրեկան.  
— Մենք գնում ենք մօտ ուրախ մարդի.  
Երբէք տխուրի  
Մենք չենք ճանաշի,  
Թէ ախուրը մեզ կանչի,  
Ի զուր բերանը կը մաշւի:

ՑԱԽԳԱՐ ԽՈՒՄԲ

Հանդիպեցայ մի խումբ ցաւերի,  
Դարձեալ նրանցից հարցրի,  
Թէ իրանց զնակն ուր պիտի լինի  
Եւ ստացայ պատասխան արժանի.  
— Մենք գնում ենք մօտ այն մարդի,  
Որ բաղմաթիւ ցաւ ունի.  
Մենք անցաւի  
Զենք ճանաշի,  
Թէ անցաւը մեզ կանչի,  
Ի զուր բերանը կը մաշւուի:

Ոչ յաջողութիւնը կանգ կառնէ  
Եւր ճանապարհորդութեան մէջ  
Եւ ոչ ճախորդութիւնը:

ԽՕՍՔԵՐ

Բոլոր մարդիկը  
Դատում են աշխարհային դատողութեամբ՝  
Իւրեանց գործերի համեմատ.  
Եւ աշխարհային մարդիկ ինչպէս վերաբերւում են  
Դէպի մի անհատ, այսպէս վերջ ի վերջոյ  
Կը դատուի այն անհատը։

ՈՅԺ

Սարեր կը քանդեմ,  
Գերաննաեր կը կոտրեմ,  
Ասացէք խնդրեմ,  
Ինչով այդ կանեմ.  
Ազնիւ ոյժով։  
Ախ, եթէ ունենամ  
Այդ ազնիւ ոյժը,  
Արքայութիւնը  
Ես կը վաստկեմ.  
Կեցցէ խիղճը ու ազնիւ ոյժը։



Հող վեր կալա ուրիշի աչքը փշելու,  
Բայց քամին նախ իմ աչքը լցըեց։

Առանց գետը հասնելու  
Ոտներդ մի հանիր։

Քանի որ մարդկանց մէջ եմ մտնում՝  
Այնքան լաւ բաներ եմ սովորում։


Սար եմ, սար եմ,  
Բայց քամին դալիս դալարւում եմ։

Ուր շատ կոիւ կայ՝  
Այնտեղ շուտ սէր կ'ընկնի։

Առաւօտ վեր կաց,  
Որ չաղքատանաս։

Թոշունների տները ծառերի վրայից  
Կարելի է քանդել,  
Բայց եթէ չարերը բոյն դնեն քո սրտի վրայ,  
Հազիւ կարողանաս քանդել։  
Զգուշացէք,  
Նրանց գերի չը դառնաք։

Մեծ պատառը  
Դժւար է կուլ տալ։



Եղին բեռ էին բարձած.  
Ճանապարհով գնալիս  
Յանկարծ ընկաւ ցեխի մէջ  
Եւ սատկում էր:  
Զին եկաւ օդնելու,  
Բայց մի խելօք ծերունի ասաց.  
Խեղճ ձի, մարդ չկայ  
Էշի ես օդնում:

Ես կամեցայ պահել Աստաւծոյ պատուիրանը,  
Բայց այս հողը,  
Որի վրայ է իմ բնակարանը,  
Արգելում է ինձ, ի՞նչ անեմ, ուր փախչեմ:

Ուր շատ սէր,  
Անդ շտու կոխ:

Բոլոր քո կեանքում  
Պահիր սիրտդ արտում:

Տէր Արարիչ, ստեղծածիդ ցաւով բովէ,  
Որ նա ճանաչէ  
Թո և մարդկանց պատիւը:

Թէ ուզում ես  
Նոր տուն շինես  
Աւելի լաւ կանես  
Առաջ մրջիւնները ոչնչացնես  
Եւ ապա շինես:

Շատ խոնարհից շատ չար չը կայ,  
Շատ չարից շատ խոնարհ չը կայ:

Լաւ ու իմաստուն ես՝  
Քեզ համար ես,  
Ինչու ամենի դէմ կը գովես,  
Ու քեզ ստորացնես:

Ապրէ,  
Մի վայրկեան ապրէ,  
Այն էլ գոնէ  
Ազնիւ ապրէ:

Բախտին թշնամի է նախանձութիւնը  
Որ տեղ հաւաքւած է հաւասարութիւնը  
Եւ վայելուչ բարի բախտը,  
Այստեղ ման է գալիս չար նախանձութիւնը  
Եւ սկսում է իւր ազդեցութիւնը:

Լաւ է ունենալ մի բարեկամ օպտաւէտ,  
Քան թէ հարիւրը անօպուտ:

Երբ ես զլուխս կախեցի  
Ծիտերը բուն էին գնում զլխիս  
Եւ մէջը ձւեր ածում:  
Բայց երբ ճակատա բացեցի  
Եւ զլուխս բարձրացրի,  
Ասիւծն էլ չէր համարձակում,  
Իմ զլխիս մօտ գալ:

Հաւ է ունենամ  
Ազնիւ թշնամի,  
Քան թէ ունենամ  
Անհաւատարիս  
Բարեկամ:

Թշնամի է իմ բարեկամը  
Այն գէպքում,  
Որ ես տրտում եմ,  
Բայց նա ուրախ:

Բարեկամս գերեզմանում  
Ես էլ նրա հետ:

Բարեկամս ուրախութեան մէջիսում,  
Ես էլ նրա հետ:

Բարեկամս տխուր, տրտում,  
Ես էլ նրա հետ:

Բարեկամս կարմիր դաշտում  
Ես էլ նրա հետ:

Դիմացիր, սովորիր ձմրան ցրտերին,  
Սառնամանիքներին, մինչև որ գարնան արժանանաս:

ՄԱՐԴԻ ՄԸ

Լսել ենք որ հինուց կուռք էին պաշտում,  
Բայց այժմս մի քանի մարդիկ  
Նրանց պէս իրենց փողն են պաշտում,  
Իրանց հոգու չափ սիրում,  
Թողնում իրենց բարեկամ,  
Թողնում հայրենիք,  
Միայն նրան, միայն նրան են պաշտում:

Թէկուզ իւր եղբայրը  
Փոս խորումն է,  
Նրա համար բոլոր անտարբեր է.  
Նա պաշտում է, պաշտում,  
Հոգու չափ սիրում:

Իւր մի սկ զրօշը  
Որ գրպանից դուրս գայ,  
Ճիշտն եմ ասում, որ հոգին դուրս կ' գայ,  
Նա պաշտում է, պաշտում  
Հոգու չափ սիրում:

Նա կեղեքում է աղքատ զիւղացուն  
Զրկում, յափշտակում,  
Աղքատ զիւղացուն,  
Իւր սկ կոպէկը հոգու չափ սիրում:  
Պաշտում է, պաշտում,  
Հոգու չափ սիրում:



ՓՈՔՐ ՃՈՒԽԾՀ

Հաւի մէկը  
Մի ճուտ առած իւր հետը,  
Ամեն օր մեր հաւը  
Դուրս կը տանէր  
Իւր ճուտը,  
Ազատ, ազատ ման կուտար,  
Յանկարծ հասաւ վատ ժամը,  
Մեռաւ մեր խեղճ հաւը:  
Ճուտը մնայ այս ու այն պատի տակ.  
Ամեն մի հաւ մօսով անցնելիս,  
Կտուցով նրա գլխին էր տալիս:  
Ես խղճացի խեղճ ճուտին,  
Տարա զրի մէջ մեր բակին,  
Բայց այն տեղ էլ չար ծտերը  
Լաւ սրած կտուցները  
Փորձում էին նրա գլխին:  
Ախ, սիրուն ճտիկ,  
Ինչպէս մնացիր որբիկ  
Եւ ամեն մի թռչնիկ  
Քեզ վրա է փորձում կտուցիկ:

ԲԱՆՉԱՐ

Համով բանջար,  
Անուշ բանջար,  
Ամեն մարդ նրա գլխին էր  
Թափել  
Ու նրան կը քաղէր,

Կը տանէր,  
Որ լաւ եփէր,  
Ախորժակով ուտէր:  
Բայց դառը խոտերը,  
Դաշտումը մնացել  
Ոչ մի մարդ էլ  
Նրանց մօտ չէր զնացել:

ԿԱՊԻԿ ԵՒ ՄԱՐԴ

Մարդու մէկը մի կով ունէր,  
Նաև մի կապիկ ունէր.  
Ամեն օր կովը կը կթէր,  
Կաթի հետը ջուր կը խառնէր,  
Բազառումը նա կը ծախէր:  
Այդ ամենը կապիկը կը տեսնէր:  
Մի օր նոյն մարդը  
Կապիկն առած իւր հետը  
Շոգենաւով անցնում էր  
Ծովի միւս ափը,  
Որ փող հաւաքէր:  
Ման տալով իր կապիկը,  
Հետն էր կաթ ծախած փողով լիք քսակը:  
Նոյն կապիկը  
Թաթը մեկնեց տիրոջ գրպանը,  
Հանեց փողով նոյն քսակը,  
Թուաւ կանգնեց շոգենաւի կայմի զլուխը,  
Հանեց միջի փողերը,  
Փողերից մի ոսկին քցեց քսակը,  
Բայց միւսը ջուրը:

Այսպիսավ ցոյց կուտար սիրոջը՝  
Կաթի միջի ջրի փողը  
Պէտք է ընկնի ջուրը,  
Իսկական կաթի փողը  
Պէտք է մնայ քո գրպանը:



ԱՆԿԵՂԾ ԵԱՐ

Եարս կրծքիս սեղմած ունենամ,  
Քամարս մէջքիս կապած,  
Միայն եար, անկեղծ եար,  
Թող աշխարհում  
Բան չունենամ:

Ես կը սիրեմ իմ եարս,  
Ես կը գովեմ իմ եարս,  
Կը փայփայեմ իմ եարս,  
Ազնիւ, հաւատարիմ եարս:

Սիրուհուս ինձանից խլեցին,  
Սիրտս մի սուր ցըցեցին:  
Ինձի նրանից բաժանեցին,  
Կաշիս դանակով քերեցին:


Ինձ թողնելով միայնակ,  
Սիրուհուս տարան պանդոկ,  
Խփեցին սրտիս սուր դանակ,  
Ոհ, իմ սիրելին այրում է ինձ:

Ոհ, հաւատարիմ եար,  
Ինձ գցեցիր սար ու քար,

Խելքս զլիմէս առար տարար,  
Ինձ թողնելով, թշնամու ձեռք մատնւեցար:  
Երբ սիրուհուս բանտարկեցին,  
Սիրտս ցաւով լցրեցին,  
Աչքերիս արտասուքը թափեցին,  
Ոհ, ինչ կոապաշտ աշխարհ է:

Երբ տարան սիրելիս,  
Զը մնաց իւղ սրտիս,  
Պակասեցաւ խելքս զլիմիս,  
Ոհ, ինչ կոապաշտ աշխարհ է:

Կոտրւաւ սրտիս սիւնը,  
Հալւեցաւ սրտիս իւղը,  
Սիս, սիրուն սիրեկան,  
Սրտիս սիւնը, նաշխուն ջան:



ԱՂՋԻԿ ՄԸ

Լեզուդ ճարտար է,  
Ինձի կը վառէ,  
Հարայ, սիրուն աղջիկ,  
Ատլազ նաշխուն աղջիկ:

Մինթանէտ լայն է,  
Ինձ անհարմար է,  
Հարայ, սիրուն աղջիկ,  
Ատլազ, նաշխուն աղջիկ:

Բուրնուզդ նեղ է,  
Ինձ անհարմար է,  
Հարայ, սիրուն աղջիկ,  
Ատլազ, սիրուն աղջիկ:

Ծամերդ շէկ է,  
Այտերդ կարմիր,  
Հարայ, սիրուն աղջիկ,  
Ատլազ, նաշխուն աղջիկ:

Աչքերդ ու է, այտերդ նաշխուն,  
Բոյդ բարձր է, ծամերդ երկայն,  
Հարայ, սիրուն աղջիկ,  
Ատլազ, նաշխուն աղջիկ:

Կրակն էլ մարդու չէ այրում,  
Ինչպէս սիրուհու սէրը:

### ԳԻՒՂԱԿԱՆ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆԻՑ

Սիրուհիս հագել է սպիտակ,  
Այտեր ունի կարմիր ու ճերմակ.  
Երբ կը լինէր հասնէր ժամանակ  
Խօսէի նրա հետ համարձակ:

Ահա եկաւ կիւրակին,  
Զարդարւելու է իմ սիրելին  
Տեսնելու եմ իրան բակին,  
Սապոկները ոտները հազին:

Սիրելիս հաւատարիմ է ինձ,  
Կարծես ընծայ է ուղարկել ինձ,  
Բայց արաքւի վատ մարդը,  
Որ կը իանզարէ մեր գործը:

Նա լսում է վատ խորհուրդ ուրիշից,  
Բայց սրտով հաւատարիմ է ինձ,  
Ոչ մի անգամ գուրս չի գայ պայմանից,  
Ոհ, սիրելիս այրում է ինձ:

Սիրուհուս տանեն, կեանքս կը տարաժամի,  
Ինչպէս հոգին մարմնից բաժանւի,  
Նրա ման գալն նման հ կագաւի,  
Նրա հագածը ապրշ ումի:

Այս օր սիրուհուս չը տեսայ,  
Որի հագածը կարմիր կերպասա,  
Թէ ուրիշը տանի նրան, ափսոսա,  
Առանց նրան իմ կեանքը կէսա:

Սիրուհիս հաւատարիմ է ինձ,  
Տեսնելուս կրակ է վառում սրտիս,  
Աշխարհս երեւում է առանց նորան վիս,  
Ոհ, իմ սիրելին այրում է ինձ:


Խելքս տարաւ սիրուհիս,  
Միտքս տարաւ սիրուհիս,  
Կեանքս մաշեց սիրուհիս,  
Ազնիւ պարոն նազելիս:

Խալի խալիչն զցեմ,  
Եարիս հիւր ընդունեմ,

Կապուտ մինթանէն հազցնեմ,  
Լաւ ընծաներ նւիրեմ։

Ափսոս իմ կեանքս տխուր անցուցի,  
Ընկերներիս մօտ ամօթալի մնացի,  
Ուխտ ու պայմանս չը կատարեցի,  
Թշնամիներիս սիրար ուրախացրի։

Ես Արշակն եմ անգին,  
Սնպատճառ կառնեմ  
Իմ եարին,  
Տեսայ, կանաչ էր նրանց այգին,  
Միջի ծաղիկները թանկադին։



### ԿԱՐԵՒԻԿ

Արի, արի կաքաւիկ  
Քեզ կը պահեմ սիրունիկ,  
Պատրաստել եմ քո բնիկ,  
Եկ, ուրախացիր, կեանք վարիր երջանիկ։



### ԱՂՋԻԿ ՄԸ

Արագ, արագ պտաւում ես,  
Թղթի նման դալարւում ես,  
Շաքարը բերանդ առել ես,  
Աքաղաղի նման երգում ես,  
Կաքաւի նման սիրուն ես։

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԳԵՕԴԱՔԼՈՒ ԳԻՒՂԻ

Իմ ծննդավայրն է Գեօդաքլու գիւղը,  
Ինձ պահող, մեծացնող Գեօդաքլու գիւղը,  
Այգիներով, ծառերով սարդարւած Գեօդաքլու գիւղ  
Գիշեր ու ցորեկ տանջւող Գեօդաքլու գիւղը։  
Տրեխները ոտներին,  
Քրտինքը երեսին,  
Հին արխալուխ հագին  
Դաշտն է վազում մեր գիւղացին.  
Մի քանի կոպէկ ոև փող բերէ,  
Իր մանուկներին նրանով կերակրէ։  
Մի քանիսն էլ փողոցումն անգործ է,  
Սրա ու նրա վրա կը զրուցէ.  
Նրա ոտը ծուռն է,  
Նրա զլխարկը հին է։  
Եւ այդ է բոլոր նրա զլխաւոր խօսքը։  
Իրա զլխարկը ամենից հին է,  
Իրա ոտը ամենից ծուռն է,  
Իրա արխալուխը մոխրով շաղախուած է,  
Որովհետև փողոցումն էշի նման պարկած է։

### ՊԱՌԱԿ ՄԸ

Երեկոյ է,  
Դաշտից տուն կը վաղէ  
Քրտինքը երեսին,  
Մի փունջ խոտ ձեռին.  
Այդ շտապողը մի պառաւ է,  
— Մայրիկ, ինչու այգակա

Դու կշտապես,  
 Հարցըի նրանից ես,  
 Պ. իմ որդիս, իմ բալէս,  
 Ես շտապում եմ,  
 Որ շուտ տուն հասնեմ.  
 Ռւնեմ, չունեմ  
 Մի հաւ ունեմ,  
 Նոյն հաւը որ թուխս դնեմ,  
 Նախիր գալու ժամանակ է,  
 Որ նախրի նման շատ ձագեր հանէ:  
 Մեր պառաւը,  
 Տուն է հանում,  
 Շուտ-շուտ ձւեր համարում  
 Եւ իրա որդուն կանչում.  
 Պ. Արամ, բալաս,  
 Իմ ջիզարս, իմ ջանս,  
 Շուտ շտապէ,  
 Դարման բէ,  
 Որ մայրդ նրա վրա ձւերը դարսէ,  
 Հաւը թուխս նստէ,  
 Կոլոր, մոլոր,  
 Նախշուն, մախշուն,  
 Ձագեր հանէ:  
 Արամ, բալաս,  
 Մեր տանը էլ ձւեր չուտես,  
 Թէ չէ մեր հաւը  
 Բոլոր իրա ձագերը  
 Չուերի մէջ կը խեղղէ:  
 Այդպէս իր որդուն կը խրատէ:  
 Արամը վերցնում է,  
 Չուերից մէկը ատամով ճաշում է,

Բայց պառաւը  
 Ատամները կրծառում է:  
 Գրողը քեզ տանի,  
 Քո արեր մեռնի,  
 Չուերը կը փոփոխուի  
 Եւ մեր հաւը,  
 Բոլորը արլոր կը հանի:  
 Պ. Վեր կաց Արամ, կորչի,  
 Գնա հաւը բռնի,  
 Որ քո մայրը ձուերի  
 Վրա դնի:  
 Ո. Էհ, մայրիկ, հաւը  
 Արօտ է դնացել,  
 Աւելի լաւ է էգուց երեկոյ դնել:  
 Պ. Տօ, վերցւած,  
 Տօ, թաղւած,  
 Էգուց կիրակնամուտ է,  
 Ճտերի կտուցները  
 Ծուռը կը լինի:  
 Ծիկօ, ծիկօ, ծիկօ,  
 Մեր պառաւը կանչում է,  
 Կրբթ-կը թալով հաւը գալիս է,  
 Պառաւը բռնում է,  
 Իրա թուխսը դնում է:

ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻՒՆ

Հայրիկ ջան,  
Ափո ջան,  
Մի քանի կոսէկ փող տուր,  
Տամ տետրակի,  
Տամ թանաքի,  
Գիրք ու գըշի.  
Միտքս կուզի  
Ուսում սովորի:  
(Հայր) Այ որդի,  
Հայրդ մի քանի շահի  
Զիբում փող ունի,  
Այն էլ պահիրի,  
Որ գինի առնի.  
Գլուխս կը ցաւի,  
Միրտս կը ցաւի.  
Գոնէ խմեմ լաւ լինի:  
Ախ, կախեթի գինի,  
Խարջի գինի,  
Իմ սիրտն ի,  
Իմ հոգինի:  
Իմ որդին ուսում ինչ կանի.  
Ես ուսում չեմ սովորէ:  
Չը ըլի,  
Դուրս եկաւ սենեակից  
Ծերունու որդին,  
Չեռը երեսին,  
Արտասուքը աչքերին,  
Ատելով տղէտ հայրին.

ՄԱՐԱԼՈՒ

Մարալու, մեր կտուրը բարձրի  
Մարալու, սիրած եարը քաղցրի,  
Մարալու, ուռի ծառին բար չունի,  
Մարալու, տակին կարափաթ չունի:  
Մարալու, հինգ ու գառս թամամա,  
Մարալու, մանեմ ծոցդ համամա:  
Մարալու, ծոցդ մի բոստան ցանեմ,  
Մարալու, ծծերդ ինձի շամամա:  
Մարալու, արի գնանք մեր բաղը,  
Մարալու, նրա միջի կարմիր նառը,  
Մարալու, քաղենք մեր ծոցը գնենք,  
Մարալու, դառնանք միատեղ քնենք:

ԱՂՋԻԿ ՄՌ

Եղջի, աղջի, նազ մի արա,  
Մինթանովդ թող մի արա  
Եկար մեր թռնով անցար մոլորեցիր,  
Շէկ ծամեր, նախշուն գերիէդ բոլորեցիր:  
Կարմիր մինթանէդ հազիդ,  
Ոսկի քամար կապած մէջքիդ,  
Եկար մեր դռնովն անցար մոլորեցիր,  
Շէկ ծամերդ, նախշուն գերիէդ բոլորեցիր:  
Լու ծիծաղը երեսին,  
Ժամացոյը զրած ծոցին,  
Ախ, իմ եար, սիրած եար,  
Խելքս զլիէտ առար տարար:

ՆԻԿՕ ԱՂԱՆ ԵՒ ԱՂՅԱՏ ԴՐԻԿԱՍԸԼ

- Դ. Բարով ձեզ, Նիկո աղա,  
 Ե. Աստծոյ բարին, Դուկաս ծառայ,  
 Դ. Աղա ջան, Աստծոյ խաթրին,  
 Իմ ճժեր քաղցած են,  
 Եկել եմ հաց կը խնդրեմ,  
 Նորանով գոնէ կերակրեմ:  
 Ե. Շատ լաւ, Դուկաս ծառայ,  
 Երկու լիտր հաց կուտամ,  
 Կուտամ միայն այն պայմանով,  
 Որ ինձ ծառայես հինգ ամսով:  
 Դ. Աղա ջան,  
 Գլխիդ դուրբան,  
 Երկու լիտր հացի համար  
 Հինգ ամսով գամ քեզ նո՞քար:  
 Ե. Քէփը քոննէ, ուզում ես արի,  
 Աւզում ես մի արի:  
 Դ. Դէ, ի՞նչ անեմ,  
 Նաչար եմ, անձար եմ,  
 Զիրիս կոպէկ չունեմ,  
 Առաւօտը գամ ծառայեմ:  
 Ելդպէս Նիկո աղան  
 Երկու լիտր հացով  
 Ծառայ բոնեց Դուկասին:



ԱՆՈՒԾ ՄՔ


Երի, արի, կաքաւիկ,  
 Քեզ կը պահեմ, սիրունիկ,  
 Վայ անուշ էր, անուշ էր,  
 Վարդանուշ էր, անուշ էր:  
 Դու իմ սիրտը տարել ես,  
 Ի՞մ ջիզարս խաշել ես,  
 Վայ անուշ էր, անուշ էր,  
 Վարթանուշ էր, անուշ էր:  
 Բոյդ նման է ծիրանի,  
 Հագածդ ալ ու ալվանի,  
 Վայ անուշ էր, անուշ էր  
 Վարթանուշ էր, անուշ էր:

Յաջող գործի դէմ,  
 Մարեր կը գալարւեն:

Մարդ կայ, մարդ է,  
 Մարդ կայ, դայլ է:

Էշի կաթր  
 Կովի կաթի տեղ են ծախում  
 Խիղճ ու ճշմարտութիւն չը կայ:





5451

2013

